
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՆՈՋ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Արևմտահայ գրականության մեջ 19-րդ դարի ութսունականները համարվում են գրական նոր զարթոնքի շրջան՝ չնայած այն հանգամանքին, որ Օսմանյան Թուրքիան կայսրությունում ապրող քրիստոնյա փոքրամասնությունների և մանավանդ ամենից խոցելի դարձած հայերի նկատմամբ գործադրում էր անհանդուրժողական քաղաքականություն: Թուրքական գրաքննությունը պարզապես արգելում էր այն ամենը, ինչը կարող էր ազգային համարվել, իսկ հայ, Հայաստան, Մակեդոնիա, հայրենիք, ազգ, հեղափոխություն, հավասարություն և այլ բառեր ոչ միայն արգելվում էին, այլև կարող էին ճակատագրական լինել հեղինակների կյանքի համար:

Մտքի և ոգու համատարած ճնշման և արգելքի մթնոլորտում գրականությունը և մամուլն էին հակազդեցիկ այն ուժերը, որոնք արևմտահայությանը հնարավորություն էին տալիս դիմագրավելու, տոկալու և պահելու ազգային դիմագիծը:

Իր բարձրության վրա էր հայ մամուլը, որը, գրականության և հրապարակախոսության ամբիոնը լինելով, իր շուրջը համախմբեց առաջադեմ հայ մտավորականներին: «Արևելք», «Հայրենիք» օրաթերթերը և «Մասիս» պարբերականը մեծ նշանակություն ունեցան գրական կյանքի և գեղարվեստական մտքի աշխուժացման գործում: Այս շրջանում էր, որ էական փոփոխություններ կրեցին գեղարվեստական մտածողությունը, գրականության ժանրային կազմը. ռոմանտիկական, զգայապաշտական և կենցաղային մանրաթեմա երկերի փոխարեն զարկ տրվեց ռեալիստական փոքր արձակին, որն իրականության ճշմարտացի պատկերումը՝ «կյանքը ինչպես որ է» սկզբունքի գործադրումով, համարում էր իր գերիսնդիրը: Թեմաներն իրական կյանքից էին, իսկ հերոսները՝ գյուղացին, քաղաքացին, դերձակը, պանդուխտը, արհեստավորը: Ինչպես նշել է Մինաս Թեոլեոյանը. «Իրապաշտ շարժումի մեկնակետ կը նկատենք Պոլսո «Արևելք» օրաթերթի հրատարակության թվականը (1 հունվարի,

1884)»¹: Հենց «Արևելքի» շուրջն էլ հավաքվել էր պոլսահայ իրապաշտ գրական մտավորականության տաղանդավոր մի սերունդ՝ Արփիար Արփիարյանը, Լևոն Բաշալյանը, Գրիգոր Զոհրապը, Մելքոն Կյուրճյանը, Տիգրան Կամսարականը և ուրիշներ, ովքեր իրենց գեղարվեստական գործերով ու քննադատական հոդվածներով հետևողական պայքար մղեցին արևմտահայ գրականության մեջ նոր գրական ուղղության ամրակայման և զարգացման համար: Դա գրական մի հզոր երևույթ էր, որը նրա գաղափարական առաջնորդների համոզմունքների և ստեղծագործական սկզբունքների շնորհիվ էլ կոչվեց 80-ականների իրապաշտական կամ ռեալիստական շարժում: Հակոբ Օշականն այդ գրողներին անվանում էր իրապաշտների սերունդ:

Բեալիզմի մուտքը և հաստատումը գրական ասպարեզում միանգամից ու կտրուկ չեղան, այլ իրականացվեցին մեծ դժվարությամբ, որովհետև տևական էր մինչ այդ իշխող ռոմանտիզմի ազդեցությունը: Հին մեթոդի կողմնակիցներն ու ջատագովները ոչ միայն չէին խրախուսում ու ողջունում նոր գրական մեթոդի ի հայտ գալը, այլև անզիջում պայքար էին մղում նրա դեմ: Դեռևս Պարոնյանի ժամանակներում ռոմանտիզմն արդեն կորցրել էր իր երբեմնի հասարակական հնչեղությունը: «Հոսոսի ձեռատետրի», «Ազգային ջոջեր»-ի առաջաբաններում և «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի սկզբնամասում նա հետևողականորեն պայքարում էր արդեն իրենց պատմական դերը կատարած ռոմանտիզմի ու սենտիմենտալիզմի ուշացած դրսևորումների դեմ: Արդեն անթույլատրելի էր ժողովրդին կերակրել ռոմանտիկական սին երազանքներով ու լուսավոր ապագայի անիրականանալի սպասելիքներով և աչք փակել ու չխոսել իրականության աղաղակող հակասությունների, հասարակական, քաղաքական ու սոցիալական հրատապ լուծում պահանջող հարցերի շուրջ: Անմիջաբար կյանքին առնչվող ու նրանից բխող գեղարվեստ ստեղծելու նպատակադրումով էին թելադրված այդ գրողների ժողովածուների վերնագրերն անգամ. Արփիար Արփիարյան՝ «Կյանքի պատկերներ», Երովսան՝ «Կյանքին մեջ», Գր. Զոհրապ՝ «Կյանքը ինչպես որ է»:

Լ. Բաշալյանն ութսունականների գրական շարժման առաջամարտիկներից էր, ով իր գեղարվեստական արձակով, քրոնիկներով, հոդվածներով կարողացավ շոշափել ժամանակաշրջանի համար հրատապ կարևորություններկայացնող հարցեր: Բաշալյանը, սակայն, միանգամից չհայտնվեց ռեալիզ-

¹ Թեղեղյան Մ., Դար մը գրականություն, հ. Ա, Բոստոն, 1977, էջ 304: Minas Teoleo-leyan, Dar my grakanutyun, Hator A, Boston, 1977, ej 304:

մի մայրուղում, այլ ունեցավ անցման մի շրջան, երբ նրա գրած պատմվածքներում ու նորավեպերում ռեալիզմի տարրերն աստիճանաբար գերակշռող ու գերակա դարձան: Զարգացման այս ընթացքում Լ. Բաշալյանը ճիշտ ըմբռնեց ռեալիզմի խնդիրներն ու առանձնահատկությունները: Նա գրականության մեծագույն արժեքը համարում էր կյանքի ճշմարտացի արտացոլումը գեղարվեստական իմաստավորմամբ: Դրա խոստովանությունն են նրա «Կյանքն ինչպես որ է», «Ժողովրդական գրականություն», «Կեղծ գրականություն» խորագրերով հոդվածները: Տեսական այդ աշխատություններում Լ. Բաշալյանը, առաջ քաշելով իրականության ճշմարտացի արտացոլման «կյանքն ինչպես որ է» ռեալիստական սկզբունքը, առաջարկում է գերծ մնալ կյանքի լուսանկարչական պատճենումից, խորանալ հերոս-միջավայր առնչությունների, իրերի, երևույթների պատճառահետևանքային հարաբերությունների մեջ, գեղարվեստական հիմնավորումով բացահայտել այնտեղ թաքնվածը, ծածուկը: Իսկ ինչ վերաբերում է գրական հերոսի կերպավորմանն ու մարդու ներաշխարհի բացահայտմանը, այդ կապակցությամբ նա հստակորեն գրել է. «Իսկական գրողը պետք է կարողանա արտաքին պատյանին տակ ներքին մարդը տեսնելու»²: Եվ իսկապես էլ իր գեղարվեստական արձակով Բաշալյանը գրականություն բերեց իրական մարդուն՝ իր թուլություններով, ներաշխարհի բոլոր վայրիվերումներով՝ գրողական մանրադիտակի տակ առնելով մարդու հոգու ամենաճածուկ անկյունները: Դա գրողին հնարավորություն էր տալիս համակողմանիորեն ճանաչելու թե՛ տղամարդուն և թե՛ կնոջը՝ իրենց բնավորության ու ներաշխարհի յուրահատկություններով:

Կինը Աստծո ստեղծած ամենաառեղծվածային էակն է, ամենաանմեկնելին: Թափանցել կնոջ ներաշխարհը, տեսնել այնտեղ այն նրբագծերը, որոնք արտաքուստ մատչելի չեն սովորական ընթերցողի տեսողությանը: Մինչդեռ գեղագետ գրողն է ի զորու տեսածն ու զգացածը գեղարվեստական պատկերով հաղորդելու ընթերցողին, իսկ Բաշալյանը դա արել է վարպետորեն:

Անդրադարձ կատարելով Լ. Բաշալյանի փոքր արձակին՝ փորձեցինք մեր ուսումնասիրությամբ ցույց տալ, թե ինչպիսին է կինը այդ հեղինակի ստեղծագործություններում առհասարակ. կինը՝ իր բնական թուլություններով, իր արժանապատվությամբ, իր նվիրումով ու դավաճանությամբ, իր նյութեղեն և աննյութեղեն էությամբ:

² **Բաշալյան Լ.**, Ժողովրդական գրականություն, «Հայրենիք», 1893, N 629: Bashalyan L., Joxovrdakan grakanutyun, «Hayreniq», 1893, N 629:

Ինքնատիպ են Լ. Բաշայանի պատումի եղանակը, ոճն ու կերպավորման արվեստը. իր նորավեպերում ու պատմվածքներում նա կնոջը պատկերել է տարբեր տեսանկյուններից: Նրա ներկայացրած կինը մեկ զսպված կիրք է, մեկ բուռն զգացմունքների տարափ, մեկ աղջկական այտերին հայտնված շիկնանք, ամոթ, մեկ արժանապատվություն է, հպարտություն, մայրական քնքուշ զգվանք, հոգատարություն: Բազմազան է կինը Բաշայանի ստեղծագործություններում՝ պարուրված գույների ու բույրերի անդիմադրելի խաղով: Կենդանի է, շարժուն և ամենակարևորը՝ բնական: Հեղինակի ներկայացրած կինը մարդկային արատներից ու թերություններից վեր կանգնած էակ չէ, որ կարող է միայն հիացմունքի ու ներշնչանքի աղբյուր լինել հեղինակի և ընթերցողի համար ու նրանց տեղափոխել երևութական, առօրյա միջավայրից կտրված մի աշխարհ: Լ. Բաշայանը, որ արդեն ռեալիզմի համոզված հետևորդն ու ջատագովն էր, չէր կարող ստեղծել մաքրագործված, բոլոր տեսակի թերություններից զերծ գրական կերպարներ. նրա առաջնահերթ խնդիրն էր վեր հանել կյանքի լավ ու վատ կողմերը, մարդկային հոգիներում գեղեցիկի կողքին ցույց տալ այլանդակն ու տգեղը:

Բաշայանի ներկայացրած կնոջը մենք տեսնում ենք սոցիալական տարբեր հարթակներում, կենսական տարբեր պայմաններում ու հանգամանքներում՝ թե՛ կյանքում իր տեղը գտնելու համար գոյության կոիվ տալիս, թե՛ հուսահատ անձնատրոյության ու ընկճվածության մեջ: Ընդ որում՝ որոշ պատմվածքներում կնոջը ներկայացնելիս նա չի ճանաչում ազգային սահմանափակում և չի պատկերում նրան ըստ ազգային յուրահատկությունների: Օրինակ՝ «Դրացուհին» պատմվածքի համակրելի անանուն հերոսուհու հույն լինելն իմացվում է միայն երկի վերջնամասում՝ նրա թաղման տխուր ծիսակարգն իրականացնող հույն հոգևորականների խռպոտ երգեցողությունից:

Լ. Բաշայանի տարազգի կին հերոսներին միավորում է կյանքը՝ իր բոլոր դրսևորումներով: Սոցիալական ծանր ու դժվարին պայմաններում հայտնըված ու դրանց դեմ մաքառող կինն է կերպավորված Լ. Բաշայանի «Դրացուհին», «Երկու կիներ», «Կաղանջեք» պատմվածքներում և «Զարթոնք» նորավեպում: Այս գործերում ներկայացված կանանցից յուրաքանչյուրի պայքարի միջոցները տարբեր են: Մեկը լուռ քարշ է տալիս իրեն բաժին հասած լուծը՝ գորշ իրականության մեջ փնտրելով հուսադրող մի շող, մյուսին կարիքը հանել է փողոց, որտեղ, մարմինը վաճառելով, օրվա մի կտոր հացն է վաստակում: Ոմանք էլ ծայրահեղ աղքատության ու կարիքի մեջ սրբորեն պահպանում են կանացի արժանապատվությունն ու հպարտությունը: Այս գործերում պար-

զորոջ ընդգծվում է ռեալիստ հեղինակի հետևյալ դիրքորոշումը: Բաշալյանն իր գրչակից ընկերներին խորհուրդ է տալիս. «...Սիրո վարժեցնել ըմբռնելու բոլոր ցավերը, որ կան մարդկության մեջ, կարեկցելու բոլոր տառապանքներուն, անոնք որ դուրսեն կը տեսնվին և անոնք որ մութին մեջ կը կողկողին»³: Եվ նա մեկը մյուսի հետևից ընթերցողի համար բացահայտում է կնոջ հոգու ցավոտ անկյունները, մասնակիցը դարձնում նրա լուռ տառապանքին: Այժմ փորձենք այդ ամենը դիտարկել վերը նշված ստեղծագործությունների օրինակով:

Նուրբ ու քնքուշ արարած է «Դրացուիին» պատմվածքի անանուն հերոսուհին: Լուռ, ամբողջովին տարված իր գործով՝ նա ջերմեռանդորեն կար է անում. դա է իր գոյամիջոցը: Հերոսուհուն ճանաչում ենք պատմվածքի մյուս հերոսի՝ Միհրանի պատումից, որ մտերմաբար նրանից «կորզում» է հեղինակն ինքը: Գործողությունների ծավալվող շղթայում տեսնում ենք միայն պատուհանի քով նստած ու կար անելիս և միայն երբեմն Միհրանի հետ հեռահաղորդակցվելիս: Գործող գլխավոր կերպարի՝ Միհրանի պատումից, սակայն, կարողանում ենք պատկերացնել, որ կարիքն ու սոցիալական ծանր վիճակն են աղջկան դրդում անդադար աշխատելու: Այսպես է նկարագրում նրան Միհրանը. «Տասնհինգ տարեկան կար չկար, սիրուն, անուշ դեմքով. երեսը գույն չկար, ճիշտ իմ սիրածիս պես, քիչ մը նիհարկեք, խոշոր կապույտ աչվըներով. մազերը դեղին էին, բայց աչքի զարնող դեղին մը, ոսկիի գույն... Հիվանդի այնպիսի դեմք մը ուներ, որ առաջին անգամեն սրտիս դիպավ...»⁴: Հենց նրա՝ լուռ, ինքնամոռաց գործով տարված վիճակն է շարժում Միհրանի հետաքրքրությունը: Պարզ, մաքուր, աննյութեղեն կապ է ստեղծվում երկուսի միջև: Աղջիկը շարունակում էր կար անել, բայց «ասեղին մեն մի հարվածը մեկ-մեկ կաթիլ կաակսեցներ իր արդեն պակաս արյունեն»⁵: Բայց ահա մի չարաբաստիկ օր այդ արյան վերջին կաթիլն էլ է ցամաքում: Ու արևի հետ իր մայրամուտն է գտնում նաև այդ արևանման աղջիկը՝ կապույտ աչքերով ու ոսկեգույն վարսերով: Աշխարհը մթնում է Միհրանի համար: Այն աղջիկը, որ մահվան հանդերձներից ավելի էր ճերմակել ու գեղեցկացել, իր հետ տարել էր ամեն բան՝ սիրո նորափոթի ծիլերը, հոգու ամենանվիրական զգացումները: Այդ գեղեցկությունն ավելի է ընդգծվում նրան հաջորդող, նույն պատուհանի առջև նստող, դարձյալ ասեղը ձեռքին կար անող կապկանման մի աղջկա

³ «Հայրենիք», 1894, N 983: «Hayreniq», 1894, N 983:

⁴ **Թվատինցի**, Լևոն Բաշալյան. Առանձար, Երկեր, Երևան, 1982, էջ 289: Tikatinci. Levon Bashalyan. Arandzar, Erker, Erevan, 1982, ej 289:

⁵ Նույն տեղում, էջ 289: Nuyun texum, ej 289:

հայտնությամբ, որի հանդեպ, բացի կարեկցանքից, չի դրսևորվում որևէ դրական վերաբերմունք ո՛չ պատմող հերոս Միհրանի, ո՛չ էլ հեղինակի կողմից: Հերոսուհին անուն չունի. նա մեկն է այն հազարավոր աղջիկներից, որոնք լուռ կուլ են գնում սոցիալական ճահճին, մաքառում են, փորձում կառչել որևէ հույսից, բայց քչերին է հաջողվում ափ դուրս գալ, այդ ճահիճը ժամ առ ժամ ազնիվ հոգիներին քաշում տանում է իր գարշահոտ ընդերքները:

Բոլոր ռեալիստ հեղինակների համար առաջնահերթ կարևորություն ունի հերոս – միջավայր կապի ներդաշնակ պատկերման խնդիրը, որովհետև նրանք, ի տարբերություն ռոմանտիկների, ունեն հերոսի միջոցով միջավայրը պատկերելու գեղագիտական նպատակադրում:

Սոցիալական ծանր խնդիրների պատճառով կյանքի հատակը նետված մի կնոջ պատմություն է ներկայացված «Չարթոնք» նորավեպում: Այս գործի կարևոր առանձնահատկություններից է Լ. Բաշալյանի այն տեսակետը, որ ռեալիզմը սահմանափակ տեղայնություն չունի: Ռեալիզմի որոշ տեսաբաններ այն կարծիքն էին զարգացնում, որ այս ուղղության հետևորդ հեղինակը նյութը անպայմանորեն պետք է վերցնի իրեն հարազատ ու քաջածանոթ միջավայրից: Լ. Բաշալյանը, որ հանգամանքների բերումով ապրել է ասիական ու եվրոպական տարբեր միջավայրերում, վեր է ռեալիզմի այսպիսի սահմանափակ ընկալումից ու մեկնաբանությունից: Նա գրականություն է բերում ոչ միայն հային ու հայկականը պատկերող գործեր, այլև մեծ վարպետությամբ կարող է ընթերցողին իր հերոսների հետ տեղափոխել իրեն ծանոթ ֆրանսիական միջավայր, որտեղ նա էլ կդառնա խելահեղ զվարճանքների մեջ եռացող Փարիզի մի մասնիկը: Նրան հայկականի հետ միասին հուզում է համամարդկային ցավը, ինչը և մենք տեսնում ենք «Չարթոնք» նորավեպում: Պատկերվող գործողությունները ծավալվում են Փարիզում, որտեղ, մանավանդ ծննդյան տոներին ընդառաջ, ետում է կյանքը, և մի ներքին բնազդ ուղղորդում է դեպի վայելքը, որտեղ ամեն ոք ձգտում է դուրս գալ իր փակ անկյունից և խելագարի նման նետվել խլրտացող ամբոխի մեջ: Պատկերը տպավորիչ է. զվարճանում է ողջ Փարիզը: Բայց կյանքը նույն բարեհաճ աչքով չի նայում բոլորին: Այս ցնձացող բազմության կողքին կան նաև թշվառներ, ովքեր, ինչպես հետո Ավ. Իսահակյանն է պատկերել «Նոր տարվա գիշերը Փարիզում» պատմվածքում, փողոցի անկյունում կանգնած, դողում են՝ կարոտ հանապազօրյա հացի: Այդ թշվառ մարդկանցից մեկն է «Չարթոնք» նորավեպի հերոսուհին, ով, մարմինը վաճառելով, հազիվ քարշ է տալիս իր թշվառ գոյությունը: «Իր նայվածքը իմ նայվածքիս կհանդիպի: Աչքն է միայն կենդանի իր ամբողջ դեմքին վրա,-

գրում է հեղինակը, - խոշոր հիվանդ աչքեր, որոնց ճերմակը ախտավոր բան մը ունի կարծես, պտղած գիծերու պես, ու նայվածքը՝ անասունի ու մանկան նայվածքի միամիտ պարզությունն ունի, անգիտակից համակերպություն մը»⁶:

Ո՛վ էր այս կինը, որ լուռ համակերպվել էր իր զագրելի վիճակին: Կյանքի հատակը նետված այն հազարներից մեկը, ովքեր արդեն պայքարելու, կյանքին նոր ընթացք տալու ուժ չունեն: «Ուրկե՞ր սկսելով, ի՞նչ թավալվոր վայրէջքով մը հասած է այդ աստիճանին, - չէ՛, այդ հատակին, ուրկե անդին ալ աստիճան չկա»⁷: Նա կին է՝ իր ապրումներով, իր կարոտով ու տխրությամբ: Կնոջ՝ դեպի մշուշոտ հեռուները ձգվող հայացքն ու նրա կարոտակեզ պատմությունը հարազատ գյուղի, հեռվում թողած բարեկամների մասին, կարծես լույս են սփռում նրա թշվառ ու ողորմելի ներկայի վրա:

Գալիս է հերոսուհու հոգեբանության բացահայտման գեղագիտական պահը: Ու հեղինակը, որ մինչ այդ կարծում էր, թե իր ու այդ կնոջ միջև մի հսկայական անդունդ կա, հանկարծ նկատում է, որ այդ անդունդը սկսում է աստիճանաբար լցվել հայրենի եզերքի հանդեպ ահագնացող կարոտով, որից ճառագող լույսը սփռվում էր սենյակում, որն առաջվա նման այլևս մուգ չէր թվում:

Կարիքի, հոգսի, զրկանքի մեջ գտնվող երկու ընտանիքների պատմություն է ներկայացված «Երկու կիներ» (Ղալաթիո սալահատակեն) ստեղծագործության մեջ: Սոցիալական ծանր կացության մեջ հայտնված երկու կին, բայց երկու տարբեր հոգեկերտվածք: Երկու կանայք էլ հայտնվել են դժվարին իրավիճակում, երբ բացվող օրն իր հետ բերում է բազմաթիվ խնդիրներ, երբ կուշտ փորով քնելը դարձել է երազանքի նման մի բան, երբ ներկան գորշ է, չհուսադրող, իսկ ապագան՝ անորոշ:

Երկու կանայք մի կերպ քարշ են տալիս իրենց գոյությունը, սակայն տարբեր են նրանց պայքարի ու գոյատևման եղանակները: Հեղինակը շեշտը դնում է նրանց ազգային հոգեկերտվածքի ու նկարագրի վրա, երբ հատկապես խոսում են գեները: Մի փոքրիկ դրվագով հեղինակը կարողանում է ընթերցողի համար վեր հանել իրականությունը՝ իր ցուրտ ու անհաղորդ կողմերով: Առաջին կինը Բոլոնիայից է, թե Հունգարիայից՝ պարզ չէ: Նա մատներն անտարբեր սահեցնում է հնամաշ ակորդեոնի ստեղնաշարով, իսկ երկու փոքրիկ

⁶ Նույն տեղում, էջ 425: Nuyt texum, ej 425:

⁷ Նույն տեղում, էջ 427: Nuyt texum, ej 427:

աղջիկները կաքավում են՝ փորձելով իրենց վրա հրավիրել հասարակության ուշադրությունը: «Օ՛, լավ սորվեր էին իրենց արհեստը»⁸:

Հիսուն քայլ այն կողմ՝ փողոցով անցնում էր մեկ այլ կին: Արտաքինից երևում է, որ գավառացի պանդուխտ է՝ Մշո դաշտից: «Կարմիր կտավ մը ծածկած էր ամբողջ դեմքը մինչև բերանը. արևակեզ այտերը միայն կերևային ու մանրիկ սևուկ աչքերը, որոնց մեջ ցուրտ կորով մը կտեսնեի ես»⁹: Նրան կրնկակոխ հետևում էր փոքրիկ մի աղջիկ: Մայր ու աղջիկ քայլում էին սալահատակ փողոցով՝ անտարբեր շուրջը կատարվող իրարանցմանը, փորձում մանր փայտի կտորներ ժողովել: Բայց «քաղաքակրթությունը ամլության էր դատապարտել բնությանը»¹⁰: Տեսնելով, որ թափած ջանքերը համարյա թե անցնում են ապարդյուն՝ կինը քայլերն ուղղում է դեպի կողմնակի փողոցը՝ ամուր բռնած աղջկա ձեռքը: Ու՛ր էր շտապում այդ կինը. իհարկե, ժողոված փայտերով կրակ անելու, տաք ճաշ պատրաստելու, որպեսզի ամբողջ օրը բռնած ամուսինը, վերադառնալով տուն, սեր, հոգատարություն, ընտանեկան ջերմություն գտներ այնտեղ:

Լ. Բաշայանը երկու կանանց հակադրության միջոցով տալիս է հայ կնոջ, հայ մոր ինքնատիպ նկարագիրը: Առանց բառերի տարափի, առանց ավելորդ պաճուճանքի հեղինակը կենդանի մի քանի բնորոշիչների օգնությամբ ցուցադրում է գավառացի հայ կնոջ բարոյական նկարագրի վեհությունը:

Հայն ու հայեցիությունն ամփոփող բաշայանական կանացի կերպարներից է Աղավնին՝ «Կաղանդչեքը» պատմվածքի հերոսուհին: Նա էլ է հայրենագրկվել ու հայտնվել օտարության մեջ՝ արժանանալով իր ազգակիցների ողբերգական ճակատագրին:

Ամանորը ամենագեղեցիկ, ամենագորովալից տոներից մեկն է, երբ յուրաքանչյուր մարդու հոգում ծավալվում է նորի սպասումի, նոր իրողությունների, նոր անակնկալների մի հորդառատ հեղեղ: Այսպիսի երազանքներ ունի նաև Աղավնին, բայց նրա ամենամեծ երազանքն է քաղցած չտեսնել իր եղբայրներին: Իսկական հայուհու տիպար է Աղավնին: Նա իր փխրուն ուսերին լուռ ու մունջ տանում է իր ընտանիքի ծանրամեծ հոգսը՝ խնամում եղբայրներին ու հիվանդ հորը:

⁸ Նույն տեղում, էջ 380: Նույն տեքստ, էջ 380:

⁹ Նույն տեղում: Նույն տեքստ:

¹⁰ Նույն տեղում, էջ 381: Նույն տեքստ, էջ 381:

Աղավնին ազնիվ է. ուզում է ամեն կերպ պատասխանել, վարձահատույց լինել Հակոբի բարեհոգությանը, ով, իր գրքերը վաճառելով, մրգեր ու անուշեղեն էր գնել Աղավնու եղբայրների համար: Ոչինչ չունենալով՝ Աղավնին՝ իբրև կաղանդչեք, վեհերոտ շարժումով նրան է մեկնում իր վարսերից կտրած մի գեղեցիկ խոպոպ:

Սոսկալի աղքատության մեջ անգամ Աղավնին պահում է իր արժանապատվությունն ու հպարտությունը, իր ազնվությունն ու կուսական մաքրությունը, ինչը հայ օրիորդի ամենից բնորոշ ու յուրահատուկ գծերից է:

Հայ կինն օժտված է և այլ բարեմասնություններով՝ նեղության մեջ չընկճվելու, կյանքի պարտադրած դժվարությունները կամքի ուժով, հնարագիտությամբ, համառ աշխատանքով հաղթահարելու կարողությամբ: Որևէ մասնագիտության մեջ նա հմտանում է, դառնում անմրցելի վարպետ և ազնիվ աշխատանքով, թեկուզև համեստ վաստակով, բայց արժանապատվությամբ պահում է իր տունն ու յուրայիններին: Աշխատանքի պաշտամունքը ազգային բնավորություն է ու մտածողություն, զավակներին բարության, ազնիվ աշխատանքի ընտելացնելը՝ ծնողական պարտք ու հպարտություն: Հակառակ օտար միջավայրի բարքերի, որտեղ վաղ մանկությունից իրենց զավակներին դաստիարակում են չաշխատելու, այլակրոններին անարգել թալանելու և կողոպտելու, անգամ մարդասպանությունն արդարացնելու «բարոյախոսությամբ», «Սյուզենիի վարպետ» պատմվածքում տեսնում ենք «հանուն պատառ մը հացի» Կարինից Պոլիս գաղթած մի հայ ընտանիքի ցավալի պատմություն: Պատմվածքի առաջին մի քանի տողերում Լ. Բաշալյանը հարկ է համարում ընդգծել կյանքի դեպքերը ճշմարտացի ներկայացնելու իր ռեալիստական նախասիրությունը. իր «պարզ պատմությամբ» ինքը ոչ թե հորինված կամ երևակայական եղելություն է ներկայացնում, այլ բուն իրողությունը. «մեր ընտանեկան խաղաղ հարկերու մեկ պարզ դրվագն է. ու եթե բանի մը չ'ծառայե, գեթ գաղափար մը կուտա, թե ջքավոր ընտանիք մը ինչ միջոցներով կ'ապրի Կ. Պոլսո մեր այլազան հայ ընկերության մեջ»¹¹:

Տարիներ առաջ Պոլիս հաստատված ամուսինը, որ հակառակ Գր. Ջոհրապի «Այրին» նորավեպի Մարտիրոսի, իր վաստակի ավելցած մի մասը բարեխղճորեն Կարին՝ հարազատներին էր ուղարկում և արդեն փոքրիկ մի սրճարանի տեր էր, նամակով Պոլիս է կանչում իր ընտանիքը՝ կնոջը՝ Մարիամին ու չորս երեխաներին՝ «երեք աղջիկ, մեկ մանչ»: Սակայն կարճ էր տևել եր-

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 311-312: Te's nuyt texy, ej 311-312:

ջանկության վայելքը, որովհետև երեք-չորս ամիս անց ժանտախտը տարել էր ամուսնուն, և այրիացած կինն ու որբ զավակները հայտնվել էին անմխիթար վիճակում: Այս հանգամանքներում է իր կամքի ուժը, բարոյական ու կամային լավագույն որակները դրսևորում գավառացի հայ կինը. «Առջի մեկ քանի օրվան ցնցումեն ետքը, Մարիամ տուտուն ինքզինքը ժողվեց: Գավառացի կնոջ այն կորովի և հաստատ բնավորությամբ, որ տարակա պանդուխտին տունը կանգուն կը պահե գավառաց մեջ, սրտին խորը թաղեց իր վիշտը, սրբեց արցունքը և գործի սկսավ»¹²: Կարգավորեց բոլոր հարցերը՝ զավակների ապագան հուսալի հունի և ընթացքի մեջ դնելու համար, և սկսեց խնայողությամբ: Կրթության արժեքն ու կարևորությունը լավ հասկացող կինը ցավ զգաց որդուն՝ տասներեքամյա Մկրտիչին, թաղային վարժարանից ճարահատ հանելով և հարևանի մոտ արհեստագործության տալով, որ հետո նեցուկ լինի իրեն: Ամուսնու համեմատաբար հարմարավետ բնակարանը վաճառեց և գնեց մի խրճիթ, որի առաստաղի տախտակների արանքներից երկինքը երևում էր, և քամին սուրում էր անարգել: Դրամ վաստակելու համար ինքը մութից մութ աշխատում էր՝ լվացք անելով և զանազան տնային աշխատանքներ կատարելով: Աճուրդով վաճառեց ամուսնու սրճարանի հնամաշ կահույքն ու սպասքը: Տարաբախտ այրին նյութական որոշ ապահովություն ստեղծեց իր ընտանիքի համար, «սկոռն սեղմեց... ու ապրեցան»: Սակայն ընտանիքի հույսը ավագ դուստր Թագուհին էր, արտակարգ ընդունակությունների տեր մի աղջիկ, որը, ասեղնագործության մեջ հմտանալով, դարձել էր «սյուզենիի» վարպետ: Իրոք հուզիչ է հրավիրվածների ներկայությամբ Թագուհուն «սյուզենիի վարպետ» օժելու արարողությունը, որը մոր՝ Մարիամի աչքերից այս անգամ բերում էր երանության արցունքներ:

Դասային անհավասարության, այդ հողի վրա ձևավորվող անհաջող ամուսնությունների ու այս ամենի մեջ տառապող հայ կնոջ կերպարին է Բաշայանն անդրադարձել իր «Անժել» և «Վերջին համբույրը» պատմվածքներում:

Երիտասարդ տարիքում արյունը մարմնովդ վեր ու վար է անում, գլխումդ խառնում ամեն բան, ու չես կարողանում իրականում տարբերել այն խոր զգացումը, որ խլրտում է ներսումդ: Այդպես եղավ նաև «Անժել» պատմվածքի համանուն հերոսուհու հետ: Սիրած տղային՝ Արսենին, կորցնելուց հետո է նա գիտակցում, թե որքան կարևոր էր այդ երիտասարդն իր համար: Գտնվելով թվացյալ երջանկության մեջ՝ սթափվում է միայն այն ժա-

¹² Նույն տեղում, էջ 312: Nuyn texum, ej 312:

մանակ, երբ գետնին ընկած է տեսնում Արսենի անշնչացած դին: Այդ վայրկյանից սկսած՝ կանգ է առնում կյանքը, ամեն ինչ գորշ երանգ է ստանում, Անժելը դադարում է ապրել ու զգալ: Արդյոք մեղավոր էր Անժելը, որ թողեց Արսենին և նշանվեց մեկ ուրիշի՝ «փայլուն ու դյուրակեցիկ» երիտասարդի հետ: Չէ՞ որ այդ ամենը նա կատարեց ծնողների ճնշման ներքո: Հետո նրան մխիթարեց նոր փեսացուն՝ իր աշխույժ ու մարդամոտ բնավորությամբ: Այստեղ իր դերակատարումն ունեցավ նաև երիտասարդությունը, երբ կյանքին նայում ես ավելի թեթև հայացքով: Անժելը զոհն է հասարակության մեջ դարերով կարծրացած դասային անհավասարության, շահադիտական նկատառումներով ստեղծվող ընտանիքների, իր ծնողների անգիտակցաբար մատուցած զոհը՝ հանուն «բարեկեցիկ» և «ապահով» ապագայի:

Ժամանակի հայ հասարակության համար նույն ցավոտ խնդիրն է արժարժված նաև «Վերջին համբույրը» պատմվածքում: Այստեղ դարձյալ պատկերված է մի իրավիճակ, երբ ամուսնության ամենասուրբ առազաստը կազմելու համար առաջնությունը տրվում է ոչ թե սիրուն, այլ նյութական կարողությանը: Իսկ այսպիսի դեպքերում սովորաբար կազմվում են դժբախտ ընտանիքներ, որտեղ կինը շարունակ տառապում է՝ չգտնելով սեր և ընտանեկան ջերմություն: «Ճերմակեղենի խանութի վարիչ» հայրն իր 22-ամյա դստերն անկեղծորեն սիրող, բժշկականի՝ «աղքատ ներկայով ու անստույգ ապագայով» 24-ամյա շրջանավարտ Տրդատից, որն իր վկայականին էր սպասում, նախընտրելի համարեց «շնորհքով ուզող» ոսկերիչ մեկին: Եթե նախորդ պատմվածքում մենք տեսնում ենք տառապող Անժելին, ապա այստեղ Վերգինի տառապանքին հեղինակը գրեթե չի անդրադառնում. միայն հիշում է, որ աղջկա և հոր միջև եղել են տևական կռիվներ, որոնք ավարտվել են աղջկա պարտությամբ: Իր ամուսնու կողքին դժբախտ է Վերգինը, թե՞ երջանիկ. Բաշալյանն այդ մասին չի խոսում, բայց հենց այն իրողությունը, որ, մահից առաջ ճանաչելով իր երբեմնի սիրած տղային՝ արդեն համբավավոր դոկտոր Տրդատին, Վերգինը փարվում է նրան ու շուրթերին թողնում մահվան շնչով պարուրված վերջին համբույրը, ամեն ինչ է ասում:

Բաշալյանի կերպավորած կանացի այս նուրբ ու գեղեցիկ կերպարների կողքին մենք առնչվում ենք կնոջ մեկ այլ տեսակի՝ հարուստ ու քաղքենի կնոջ, ում շողողուն ու առինքնող արտաքինի տակ տեսնում ենք դատարկ ու անհրապոյր ներաշխարհ: Հետին պլան են մղվում բոլոր բարոյական արժեքները, իշխող են դառնում փողը, կիրքը և անմաքուր զգացմունքները: Այս են վկայում Բաշալյանի «Այս է եղեր» պատմվածքը և «Հմայաթափ» նորավեպը:

«Այս է եղեր» պատմվածքում Մառի Սիմյանի կերպարով հեղինակը մերկացնում է պոլսահայ հասարակության վերին խավերի վարած գեխ ու շվայտ կյանքը: Ո՞վ էր մեծահարուստ Պողոս էֆենդուն կինը՝ տիկին Սիմյանը: Հրաշագեղ արտաքինով մի կին, ում բնությունը չէր խնայել զարդարելու կանացի գեղեցկությամբ ու հմայքներով: Այսպես է նկարագրում հեղինակը Մառի Սիմյանին. «...Երեսուն տարեկանին մոտ կին մըն էր, գռեք տը շինե կաթնագույն շրջագեստ մը հագած, որուն պարանոցին քառակուսի բացվածքեն՝ միսը կերևար սպիտակ և վարդերանգ... Աչվըները, սևաթույր լայն թարթիչներու տակ նվաղկոտ ցուք մը ունեին, որուն մեջ ճերմակը կկորսվեր. այդ աչքը, մրագույն ծիրով շրջանակյալ, ամբողջ ապականություն մըն էր, չես գիտեր ինչ հրավեր մը, հրամայական և խուսափուկ միանգամայն... Գլխուն վրա պողիկան գլխարկը կբարձրանար հոխորտ, պատերազմիկ և անառակ կեցվածքով...»¹³: Այդ կնոջ յուրաքանչյուր շարժումից մեղք էր հորդում, բայց ցանկալի ու առինքնող մի մեղք, որ իր գալարքի մեջ էր առնում ամեն բան: Այդ մեղքի հորձանուտը ինքնամոռաց նետվեց Միքեն՝ պատմվածքի գլխավոր հերոսը, գեղեցիկ ու վայելչակազմ մի երիտասարդ, ով զգում էր, թե ինչպես «...մեքենային ատամներուն տակ դրված էր արդեն իր մեկ թևն... քիչ-քիչ, իր բոլոր մարմինը պիտի թավալեր այդ ատամներուն տակ և ջախջախվեր»¹⁴: Գիտակցելով այս ամենը՝ Միքեն գնում էր առաջ. նրան իր մոտ էր կանչում Մառիի թովչանքը:

Պատմվածքում ուշագրավ են նաև հեղինակի՝ Պողոս էֆենդուն տրված բնութագրումները: Նա ընթերցողի համար բացում է պոլսահայ բարձրաշխարհիկ ընտանիքների վարագույրները և թույլ տալիս աչք ձգել պատուհանից ներս, տեսնել նրա ապականված կողմերը: Հասարակության այս խավն է, որ ոսկու և արծաթի փայլով փորձում է սքողել իր ներքին այլանդակությունը, ինչը չէր կարող չմատնանշել ռեալիստ Բաշայանը:

Իսկ «Հմայաթափ» նորավեպում (Բաշայանի անդրանիկ գործն է, լույս է տեսել 1888թ.) մենք հանդիպում ենք քաղքենի կնոջ մեկ այլ տեսակի, ում համար դիմացինի զգացմունքներն ու տառապանքը ոչ մի արժեք չունեն: Տիկին Ջյունայույանը քիչ թե շատ զարգացած կին է՝ ծանոթ ֆրանսիական գրականությանը: Նա հաճելի արտաքին ունի, բայց միևնույն ժամանակ փոքրոգի է: Իմանալով Գևորգի թշվառ կյանքի, նրա նուրբ հոգու ու տառապանք-

¹³ Նույն տեղում, էջ 298: Նույն տեքստ, էջ 298:

¹⁴ Նույն տեղում, էջ 307: Նույն տեքստ, էջ 307:

ների մասին՝ վերջինիս դարձնում է խամաճիկ, իր ընկերուհիների ծաղրուծանակի առարկա: Ոչ միայն տիկին Ջյումայուլյանն է այդպիսին, այլև նրա ընկերուհիները: Նրանք հագիվ են զսպում իրենց ծիծաղը, երբ Գևորգը հուզմունքով ընթերցում էր իր սրտառուջ բանաստեղծությունները: Գևորգը զվարճալի խաղալիք է վերջիններիս համար, ում հետ կարելի է խաղալ և դուրս նետել, երբ արդեն պետք չէ: Այսպես էլ վարվում է նրա հետ տիկին Ջյումայուլյանը, երբ Գևորգը խոստովանական նամակով տիկնոջը հայտնում է իր սիրո մասին: Վերջինս նրան ազատում է աշխատանքից, ծառայի միջոցով հաղորդում, որ իրենք նրա ծառայությունների կարիքն այլևս չունեն: Փողի ամենազոր ուժն է, որ թույլ է տալիս հասարակության «վերնախավ» կոչվածներին տրորելու կարողությամբ իրենցից ցած գտնվողների արժանապատվությունը: Ռեալիստ հեղինակը մատնանշում է նաև կենսական մեկ այլ ճշմարտություն, որ վերածվում է գեղարվեստական ու գաղափարական ընդհանրացման. Գևորգի նման երազող, թույլ կամքի տեր մարդիկ չեն կարող գոյատևել մի հասարակության մեջ, որտեղ գործում են հակամարդկային օրենքներ:

Լ. Բաշալյանի պատմվածքներն ու նորավեպերը պատկերում են մեզինից ժամանակով ու տարածությամբ հեռացած մի ուրույն աշխարհ, որտեղ կար բոլոր ժամանակների համար ընկալելի ու մարդկայնորեն հասկանալի մի կյանք՝ իր այլազան դրսևորումներով: Այդ բազմաշերտ ու բազմախորհուրդ կյանքը, անշուշտ, պայմանավորված չէ միայն կանանցով, և Լ. Բաշալյանի երկերում էլ այն պատկերված է ռեալիստական ճշգրտությամբ: Բարձր արվեստը դրսևորվել է թե՛ ժամանակի ու միջավայրի հարազատ վերարտադրության և թե՛ կերպարաստեղծման վարպետության մեջ:

Այս փոքրիկ ուսումնասիրությամբ, սակայն, մենք փորձեցինք բացահայտել միայն կնոջ կերպավորման արվեստը, ցույց տալ, թե ինչպիսի վարպետությամբ է հեղինակը վրձնել կնոջ ներքինն ու արտաքինը: Բաշալյանական կինն աննյութեղեն էակ չէ՝ օժտված միայն առաքինություններով ու դրական հատկանիշներով: Նա մարդ է՝ նաև այդ տեսակին բնորոշ թերություններով ու թուլություններով: Նա գեղեցիկ է, ադինքնող, բնության նման վայրի ու կուսական, նաև քաղքենիության ճահիճը մխրճված մի զազրելի արարած: Նա պարզապես կին է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածով անդրադարձ կատարելով Լ. Բաշալյանի փոքր արձակին՝ նպատակ ունեինք մեր կատարած ուսումնասիրությամբ ցույց տալ, թե ինչպիսի նոր գաղափարներ, տեսակետներ է բերում հեղինակը գրականություն (հատկապես ռեալիստական մեթոդի հաստատման և զարգացման տեսանկյունից):

Անդրադառնալով հեղինակի ստեղծագործություններում ներկայացված կանանց կերպարներին՝ աշխատեցինք նրանց օգնությամբ ներկայացնել Բաշալյանի գրական – գեղագիտական դիրքորոշումները, գրականության և կյանքի փոխհարաբերության շուրջ նրա առաջ քաշած տեսակետները, հեղինակի՝ հերոսների հոգու ծածուկ անկյունները թափանցելու կարողությունները:

Բանալի բաներ - ռեալիզմ, ռոմանտիզմ, գեղագիտություն, կերպավորման արվեստ, դասակարգային անհավասարություն:

ОБРАЗ ЖЕНЩИНЫ В ПРОЗЕ ЛЕВОНА БАШАЛЯНА

ТАМАРА АНДРЕАСЯН

В данной статье, обратившись к краткой прозе западноармянского автора Левона Башаляна, мы постарались нашими изучениями показать, какие новые идеи, точки зрения привносит автор в литературу (особенно относительно утверждения и развития реалистического метода).

Обратившись к образам женщин, показанных в произведениях автора, мы постарались с их помощью представить литературно–эстетическую позицию Башаляна, выдвинутые им аспекты взаимоотношений литературы и жизни, умение автора проникать в тайники души героев.

Ключевые слова - реализм, романтизм, эстетика, искусство создания образа, классовое неравенство.

LEVON BASHALYAN'S PORTRAYAL OF WOMEN

TAMARA ANDREASYAN

This article is a study of Levon Bashalyan, a Western Armenian writer. Its aim is to highlight the new concepts and viewpoints that Bashalyan introduces to literature, especially the ones that establish and develop realistic methods.

The author, through her analysis of Bashalyan's portrayal of women, presents Bashalyan's literary and aesthetic stance, his thoughts concerning the correlation between literature and life that he has put forward and his unique way of penetrating into the souls of the female heroes he has created.

Key words - realism, romanticism, aesthetic, the art of creating an image, class inequality.